ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՓԱՂՈՒԱԾՓ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Մարտի 5. Սինոդը զննեց Մայր Աթոռի գանձարանի փետրուար ամսուայ ելումուտը, որից երևեցաւ որ արդեանց տումարի մէջ գրուած էր մինչև նոյն ամսուայ մէկը մնացած 48,858 ռ. 53 կոպ. և այդ ամսուայ ընթացքումն էլ մուտք եղած էր 11,746 ռ. 5 կ., ընդամենն 60,604 ռ. 58 կ., ծախքը 6266 ռ. 68 կ. և մնաց մինչև մարտի մէկը 54,337 ռ. 90 կ., իսկ աւանդապահութեան տումարում մուտք գրուած էր միայն 24 ռ., որ մնացած գումարի հետ արաւ 27,180 ռ. 12 կ., ծախք չէր եղած։

Մարտի 9. Սինոդը Մայր Աթոռի վանական կառավարութեան յայտարարութեան համեմատ մնալաճառ Միքայէլ Բարսեղեանի և Գէորգ Թարխանեանցի 400 ռ. գրաւականը, որ գրուած է Մայր Աթոռոյ գանձարանում, հրամայեց յետ դարձնել, որովհետև նոքա իւրեանց պայմանը ճշդիւ կատարել էին, մինչև բուն Բարեկենդանի օրը վանքի Միաբանութեան և ձեմարանի աշակերտների համար պէտք եղած միսը տալով։

Մարտի 9. Աղջաղալեցի բարեկրօն Սարգիս քահանայ Եղիազարեանցը ժողովելով 70 ր. նուէր կուաշ (կօշ) աւանի ս. Գէորգ ուխտատեղի շինութեան համար՝ ուղարկել է Սինոդին, որ պատուիրեց Մայր Աթոռի գանձապահին աւանդապահութեան տումարում մուտք և ծախք գրելուց յետոյ՝ այդ փողը յանձնել նոյն ուխտատեղի շինութեան վերատեսուչ Աշտարակեցի Յովհաննէս վարդապետին։

Մարտի 9։ Տփխիսու Կոնսիստորիայն Մայր Աթոռի կրպակի նախկին վարձակալ Յովհաննէս Յարութիւնեանցի գրաւ դրած Արևելեան փոխառութեան երկու տոմսերը, որ թողել էր վարձակալը 200 ռ. վարձի տեղ, ուղարկել է Սինոդին, որ և ուղարկեց կուպոնների հետ միասին Ս.-Պետերբուրգի Արքունի բանկը, որ 1880 թուից սկսած մինչև հիմայ ստացուի այդ գումարի տոկոսը և տոմսերը նորոգուի։

—

Մարտի 11։ Նոյն կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինոդը թոյլ տուեց Ս. Աթոռի Տփխիսում գտնուած տան վարձակալ պ. Համբարձում Էնֆիաճեանցին՝ որ երեք հարիւր ռուբլի ծախսով նորոգէ այն տան հիւսիսային պատը ու տանիքը և այդ շինութիւնը հաստատուն լինելու համար հսկողութիւնը յանձնեց Մայր Աթոռի Տփխիսում եղած կալուածների կառավարիչ բարեշնորհ Համազասպ վարդապետին։

—

Մարտի 16։ Ամենայն Հայոց Կաթուղիկոս ի Տէր Հանգուցեալ Մակարի փողերի և իրերի յափշտակութեան գործի մասին Սինոդը նօտարական կարգով Մայր Աթոռի կողմից հաւատարմատար կարգեց Սինոդի փաստաբան պ. Ռուբէն Հասան-Ջալալեանցին, որ իբրև քաղաքական պահանջատէր դատարանում պաշտպանի ս. Էջմիածնի օգուտը։

—

Մարտի 25։ Երևանի թեմական խորհրդի փոխանորդ Դեր. Գրիգոր եպիսկոպոսի յայտարարութեան համեմատ Սինոդը պատուիրեց Մայր Աթոռի գանձապահին Ալէքսանդրապոլու Արդութեան օրիորդաց դպրոցի մայր գումարից գրել ծախս աւանդապահութեան տոմարի մէջ հինգ հարիւր ռուբլի և ուղարկել նոյն դպրոցի հոգաբարձութեան, որ դատարանների ձեռնարկած շինութիւնը գլուխ բերէ։

—

Մարտի 23։ Սինոդը Մայր Աթոռի գիւղերի այն է՝ Վաղարշապատի, Օշականի, Մուղնուայ, Եղվարդու, Մաստարու և Բջնու

այս տարուայ երկրային բոլոր բերքը վարձով տալու համար ժամանակ որոշեց իւրաքանչիւրին ջոկ ջոկ օր և այդ մասին յայտարարեց կոնսիստորիաների և Երևանու ոստիկանութեան ձեռքով ի լուր հասարակութեան նոյնպէս և հրատարակել տուեց «Կոլկաս», «Մշակ» և «Նոր-Դար» լրագիրներում, որ ցանկացողները կարող են գալ Սինոդը և աճուրդով վեր առնել այդ գիւղերի արդիւնքը։

—

Մարտի 23։ Սինոդի Սրբազան Անդամները Մոզնեցի Գէորգ Քամալեանի խղճալի վիճակի վերայ գթալով՝ պատուիրեցին Ապարանու գործակալ բարեշնորհ Աշոտ աբեղային, որ հինգ տարի շարունակ տայ նրան տարեկան տասն և հինգ պուդ ցորեն (50 լիտր)։

—

Մարտ 23։ Սինոդը պատուիրեց Մայր Աթոռի գանձապահին արդեանց տումարի ծախս գրել ութ հազար ռուբլի, որը և յանձնել վանական կառավարութեան նախագահին և Անդամներին՝ Մայր Աթոռի, Ճեմարանի և Տպարանի Մարտ ամսուայ ծախսերի համար։

—

Ապրիլի 1։ Սինոդը Օշականում գտնուած «Արևգունի» անունով անտառն ու այգին հրապարակական աճուրդի համեմատ տուեց նոյն գիւղացի Բայազ Մեհրապեանին տարեկան 180 ռ. վարձով։

—

Ապրիլի 1։ Հրապարակական սակարկութիւնից յետոյ Սինոդը օգտակար համարեց Մայր Աթոռի մնավաճառութիւնը յանձնել Վաղարշապատցի Եղիազար Շահոյեանին, որ յօժարեցաւ տալ տաւարի մեկ պուդը 1 ռ. 63 կ. ոչխարինը 2 ռ. 20 կ. և գմակը 3 ռ. 85 կ. և այսպէս պիտի շարունակուի առաջիկայ Զատկից սկսած մինչև գալող բուն Բարեկենդան։

—

Ապրիլի 1· Երևանի կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինոդը թոյլ տուեց Նախիջևանու Հայոց հոգևոր կառավարութեան որ վիճակային արդիւնքից տարեկան 120 ռ. վճարելով մի գրագիր վարձուի նոյն կառավարութեան համար։

—

Ապրիլի 1· Սինոդը Աշտարակում գտնուած «Աղմոսավանք» անունով այգին հրապարակական աճուրդի համեմատ տուեց վարձով նոյն գիւղացի Սահակ Աղումեանցին տարեկան 42 ռուբլու վեց տարի ժամանակով։

—

Ապրիլի 1· Սինոդը տնօրինեց Շուշու գաւառի Ղլիջբաշ գիւղացի Գրիգոր Մելքումեանցին հանել հարկատուաց շարքից և նրան ընդունելով հոգևոր տեսչութեան մէջ, նոյն գիւղի եկեղեցուն սպասաւոր կարգել։

—

Ապրիլի 1· Սինոդը տնօրինեց Աստրախանցի Պօղոս Մօլախալցեանցին հանել հարկատուաց շարքից և նրան ընդունելով հոգևոր տեսչութեան մէջ նոյն քաղաքի եկեղեցուն սպասաւոր կարգել։

—

Ապրիլի 9· Բարձրագոյն հրամանով Բարդուղիմէոս վարդապետը հեռացրած լինելով ս. Էջմիածնի Սինոդի անդամութիւնից՝ հաստատուած են նոյն պաշտօնի մէջ Ներսէս վարդապետ Հայկազունին և Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանը· Սինոդը տնօրինեց հրաւիրել նորոգ կարգուած Անդամներին իւրեանց պաշտօնը վարելու, որոնցից Ներսէս վարդապետը նոյն օրը՝ սահմանած կարգին համեմատ, երդուեց։

—

Ապրիլի 10· Կովկասեան զինուորական շրջանի զօրքերի հրամանատարի թղթին համեմատ Սինոդը Երևան քաղաքի ս. Սարգիս եկեղեցու ծխատէր Գրիգոր քահանայ Սուքիասեանցին կարգեց ժամանակաւոր հովուող Կովկասու տեղական Հայ զօրքերին։

—

Ապրիլի 10։ Ս։ Աթոռի Նորագիւղի այգու վարձակալ Երևանցի Տէր-Բարսեղեանի խնդրանաց համեմատ Սինոդը նորա գրաւ դրած երկու հարիւր ռուբլին յետ դարձրեց նրան։

—

Ապրիլի 10։ Այս տարի Մայր Աթոռի վանական կառավարութիւնը ծանրաբեռնուած լինելով տնտեսական զանազան գործերով և շինութիւններով և նորա մի Անդամի Անդամ բարեշնորհ Ներսէս վարդապետի Բաղդասարեան հրամանով Սինոդի Անդամ հաստատուելով, Սինոդը բարեշ։ Յովակիմ վարդապետ Ղամէքեանցին և Վահրամ աբեղայ Սկլունուն կարգեց վանական կառավարութեան Անդամ։

—

Ապրիլի 13։ Տփխիսու Նահանգական դատարանի պրոկուրորը Զրօրհնեաց հանգիսի օրուան համար Տփխիսում կուր գետի վերայ շինած կամուրջի խորտակման գործի մէջ մեղաւոր գտնելով այնտեղի ս։ Սարգիս եկեղեցու ծխատէր Կոստանդին քահանայ Արարատեանցին, իւր դատողութիւնը քննութեան գործի հետ ուղարկել էր Սինոդը և խնդրել էր, որ Սինոդն էլ իւր կարծիքը տայ այն մասին։ Սինոդը այդ քննութեանը հաստ լինելուց յետոյ՝ տեսաւ, որ իսկապէս յանցաւոր է Արարատեանցը և գործը յետ դարձրեց նոյն պրոկուրորին։

—

Ապրիլի 13։ Երևանի Կոնսիստորիայում կատարուած աճուրդի համեմատ Սինոդը Մայր Աթոռի Նորագիւղի (Երևան) այգին տուեց վարձով Երևանցի Մկրտիչ Երամեանցին ինն տարի ժամանակով տարեկան 680 ռուբլու և պատուիրեց վանական կառավարութեանը, որ նոյն այգու հնձանի, պարսպի և դրան խարխուլ տեղերը նորոգէ։

—

Ապրիլի 13։ Սինոդը պատուիրեց Մայր Աթոռի գանձապահին, որ Սաղմոսավանքի այգու նախկին վարձակալ Աշտարակցի Յարութիւն Աւետիսեանի (այժմ Տէր-Թադէոս) տասն ռուբլի գրա-

ւականը ծախս գրէ և յանձնէ նրան Սինոդի հետ կապած պայմանը ճշդիւ կատարելու պատճառով։

—

Ապրիլի 14· Երևանում բնակւող Մակար Տէր-Սարգսեանին անցեալ տարի Սինոդի տնօրէնութեամբ տուած էր Վաղարշապատում 30 ռուբլի տարածութեամբ այգու տեղ։ Այս տարի Տէր-Սարգսեանը այդ այգետեղի տիրապետութեան վկայականը յետ դարձնելով յայտնեց՝ թէ ինքն այլ ևս Երևանից Վաղարշապատ փոխադրուելու ժամանակ չունի և թէ իրան տուած այգետեղում, որից իրաւունք ունէին օգտուելու հանգուցեալ Մակար Հայրապետի քրոջ թոռները Վաղարշապատցի Սմբատ և Մամիկոն Տէր-Պետրոսեան եղբայրները՝ նորին իսկ հաճութեամբ տնկած են խաղողի որթեր և պտղատու ծառեր, որոնց հետ Սինոդը ինչպէս կամենում է թող վարուի իբրև կալուածատէր։ Արանից յետոյ Տէր-Պետրոսեան եղբայրները խնդիր տուին Սինոդին և յայտնեցին՝ թէ Տէր-Սարգսեանի վերադարձրած այգու կէսը իրենց կը պատկանի և թէ տաժանելի մշակութեամբ և իրանց սեպհական 500 ռ. ծախսով ամայի դաշտը այգի են դարձրել· և խնդրեցին, որ իրանց ձեռքով տնկած այդ այգու կէս մասը իրանց յանձնուի։ Սինոդը մարդ ուղարկեց տեղեկացաւ, որ Տէր-Պետրոսեան եղբայրների արած ծախսը երկու հարիւր ռուբլուց աւելի չի լինի։ Սինոդի վերայ թէև հարկ չկար վճարելու արած ծախսը կամ տալ մշակած այգետեղին մինչդեռ միայն Մակար Տէր-Սարգսեանցին էր սեպհականած օրինաւոր վկայականով, որ և նա յետ է դարձրել, բայց աչքի առաջ ունենալով Տէր-Պետրոսեանների անկարողութիւնը՝ Սինոդը հրամայեց Մայր Աթոռի գանձարանից 200 ռ. տալ Տէր-Պետրոսեաններին այգետեղի համար արած ծախքերի փոխարէն, իսկ տեղը առաջուայ պէս ամայի դրութեան վերածել։ Սինոդի Ատենապետի Տեղակալ Ամենապատիւ Երեմիա Արբազանը ստորագրելով օրագիրը՝ գրել է «—ՆԻՄ ՂԿՈՐԾԻ»։

—

Ապրիլի 15· Սինոդի Անդամ Դեր· Գրիգորիս եպիսկոպո-

Աղուանեան ծառայութեան գործով ուղևորել էր Տփխիս. Սինոդը հրամայեց Աղուանեան Սրբազանին բացակայ համարել մինչև դարձը։

—

Ապրիլի 17, Մայր Աթոռի վանական կառավարութեան յայտարարութեան համեմատ Սինոդը պատուիրեց Մայր Աթոռի Գանձապահին, որ արդեանց տոմարում ծախս գրէ տասը հազար ռուբլի, որը և յանձնէ նոյն կառավարութեան նախագահին և անդամներին Մայր Աթոռի և Ճեմարանի ապրիլ ամսուայ ծախսերի համար։

—

Ապրիլի 17. Տփխիսու կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինոդը պատուիրեց նոյն թեմի Առաջնորդ Գեր. Մամբրէ եպիսկոպոսին, որ Արդուինու Հայոց դպրոցի ուսուցիչ Կարապետ Մալխասեանցին քահանայ ձեռնադրէ նոյն տեղի ժողովուրդը հովուելու։

—

Ապրիլի 17. նոյն կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինոդը պատուիրեց թեմի Առաջնորդ Գեր. Մամբրէ եպիսկոպոսին, որ Ներսիսեան դպրանոցում ուսումնաւարտող դպիր Մարտիրոս Ղամազեանցին քահանայ ձեռնադրէ Տփխիսի Էջմիածնեցոնց ս. Գէորգ եկեղեցու ժողովուրդը հովուելու։

—

Ապրիլի 17. Ս. Շողակաթի վանքի վանահայր Խոսրով վարդապետը իւր անվայել ընթացքի համար արձակուած լինելով վանահայրութեան պաշտօնից՝ Սինոդը նորա տեղը վանահայր կարգեց Թադէոս աբեղային։

—

Ապրիլի 17. Սինոդը Ս. Էջմիածնի Միաբանութեան կողմից Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութեան համար պատգամաւոր կարգեց 1. Յովհաննէս եպիսկոպոս Տէր-Յարութիւնեանին, 2. Մինաս վարդապետ Պարոնվարդեանին, 3. Յովակիմ վարդապետ Ղամբէեանին, 4. Յովհաննէս վարդ. Դպիր-Վարդանեանին,

5· Մակար վարդապետ Բարխուդարեանցին, 6· Եղիա վարդ· Ջալալեանցին և 7· Վարդան վարդ· Վարդանեանին։

—

Ապրիլի 17· Երևանի քաղաքային վարչութեան պահանջի համեմատ Սինոդը պատուիրեց Մայր Աթոռի վանական կառավարութեան հարիւր քառասուն ռուբլի չորս կոպէկ ծախս գրել և ուղարկել Երևանու արքունի գանձարանը Մայր Աթոռի, Սևանայ և Գեղարդայ վանքերի կալուածների 1891 թուի հարկերը վճարելու համար։

—

Ապրելի 17· Վանական կառավարութեան յայտարարութեան համեմատ Սինոդը պատուիրեց Մայր Աթոռի Գանձապահին, որ ծախս գրէ երկու հազար ռուբլի և յանձնէ նոյն կառավարութեան նախագահին և անդամներին Աթոռի Միաբանների սենեակների շինութեան Ապրել ամսում եղած ծախսերի համար։

—

Ապրելի 24· Ախալքալակի և Ծալկայի նախկին գործակալ Խորէն աւագ քահանայ Բարսէղեանցը գաղել էր Մայր Աթոռի վիճակային արդիւնքից 1621 ռուբլի և այս գործը քննողին էլ պարտաւորուել էր տալ 200 ռ· ճանապարհի ծախս՝ ամենն 1821 ռ· և Սինոդի 1888 թուի վճռի համեմատ այդ փողը պիտի հատուցանէր երկու տարուայ ընթացքում, բայց այդ գումարից երեք հարիւր յիսուն ռուբլի միայն վճարելուց յետոյ՝ խնդրում է Սինոդից մնացած փողի տեղը ընդունել իւր պարտապանների մուրհակները· Սինոդը մերժելով Տէր-Խորէնի խնդիրը պատուիրեց Տփխիսու կոնսիստորիային դադարեցնել նորան քահանայագործութիւնից, մինչև որ նորա ծխերի արդիւնքից լրացուի Սինոդի 1471 ռուբլի պահանջը։

—

Ապրիլ 24· Սինոդը մերժեց Տփխիսու Հայոց կոնսիստորիայի միջնորդութիւնը Գանձակեցի Սիմէոն Մատթէոսեանին հոգևոր տեսչութեան մէջ ընդունելու մասին, որովհետև Գանձակի Ս·

Յովհաննէս եկեղեցին բաւական օրբաղնագործ և ստորին պաշտօնեաներ ունի։

—

Ապրիլ 24։ Ղարաբաղու Հայոց Կոնսիստորիայն 1883 թուին յայտնել էր Սինոդին թէ Գտչոյ վանքի միաբան Առաքել աբեղայ Կոստանեանցը և Հատրութցի Յովհաննէս քահանայ Տէր-Ստեփանոսեանցը չորս պսակ էին կատարել ինքնագլուխ առանց հրամանի, բայց մինչև գործի վերջնական քննութիւն առնելը երկու յանցապարտն էլ վախճանուել էին։ ուստի Սինոդն հրամայեց նոցա մահուան պատճառով այս գործը վերջացնել և տեղեկութիւն տալ կոնսիստորիային։

—

Ապրիլի 24։ Ղարաբաղու Հայոց կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ Սինոդը ընդունելով հոգևոր տեսչութեան մէջ Շուշեցի Նիկողայոս Ա.Հարոնեանցին՝ կարգեց սպասաւոր նոյն տեղի Ագուլեաց Ս. Աստուածածին եկեղեցում։

—

Ապրիլի 24։ Ղարաբաղու Հայոց Կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ Սինոդը քննելով Լանքարանցի Նիկողայոս և Զաքարիա Տիրացու Մկրտչեան Նազարբեկեանցի ծննդական վկայական տալու գործը։ հրամայեց տալ նոցա խնդրած վկայականը չորրորդ աստիճանաւոր դպրի որդու իրաւունքով և ոչ իբրև սարկաւագի որդու։ որի համար չկայ գրաւոր ապացոյց բացի վկաների ցուցումից։

—

Բանանց գիւղի եկեղեցու դպիր Միքայէլ Տէր Աւետիքեան թողնելով իւր սպասաւորութեան պաշտօնը եկել բնակել է Գանձակ քաղաքում և այդ տեղ փաստաբանութիւն անում։ Տփխիսու Հայոց Կոնսիստորիայն պատուիրել է նրան դառնալ Բանանց և ծառայել եկեղեցուն, բայց Տէր Աւետիքեանը չէ լսել։ այդ բանի համար Սինոդը կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ հրամայեց Տէր-Աւետիքեան Միքայէլի անունը հանել դպիրների թուից և նոյն վիճակի հոգևորականների ցուցակից։

—

Ապրիլի 27· Երևանու Հայոց Կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ Սինոդը Խմրլեցի Գրիգոր Եղիազարեանի համար ոսկեայ մետալ խնդրեց Կովկասու Պ· Կառավարչապետից իբրև վարձատրութիւն նորա տասնամեայ արդիւնաւոր երեսփոխանութեան պատճառով՝ որ արել է Իւրեանց գիւղի եկեղեցում։

—

Ապրիլի 27· Տփխիսու Հայոց Կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ Սինոդը պատուիրեց նոյն վիճակի Առաջնորդ Գեր· Մամբրէ Եպիսկոպոսին, որ քահանայ ձեռնադրէ ճեմարանում ուսումն աւարտած Ստեփաննոս Մամեանցին Դիլիճան գիւղի ժողովուրդը հովուելու։

—

Ապրիլի 27· Աղէքսանդրապոլցի Նաշխուն Ղարիպեանի մարդը՝ Ղուկաս Յարութիւնեանը իւր վատթար սովորութեամբ վատնել էր բոլոր գոյքը և մոլուելով անառակութեան և արբեցութեան ախտերով, հանապազ նեղել ու տանջել էր կնոջը՝ Նախշունին· ապա գնալով Պարսկաստան՝ 1883 թուին ուրացել էր իւր հաւատը և դարձել մահմետական։ Սինոդը պատուիրեց Երևանու Հայոց կոնսիստորիային· եթէ մինչև հիմա Ղուկասը չէ զղջացել և իւր կնոջ մօտ չէ եկել, թոյլ տալ կնոջը՝ Նախշունին նորից ամուսնանալու։

—

Ապրիլի 27· Մաստարեցի Պօղոս քահանան գնացել էր Փերթիքեան գիւղը և այնտեղ այրի Նազարէթ Աստուրեանին պըսակել էր Մաստարեցի Շամամ Շարաւեանի հետ փեսայի տան թոնրի (թոնտիր) շրթում առանց հոգևոր իշխանութեան հրամանի, միայն 8 ռուբլի առնելով իւր օգտին։ Երկու ամսից յետոյ վկայական էր տուել Փերթիքեանու ծխատէր քահանային՝ թէ ինքը բնաւ չէ օրհնել Նազարէթի և Շամամի պսակի խորհուրդը, այլ իւրեան զրպարտումն են թշնամի մարդիկ։ Հշմարտապէս քննելուց յետոյ Սինոդը հրամայեց դադարեցնել Տէր-Պօղոսին քահանայութիւնից վեց ամիս ժամանակով և պահանջել նը-

բանից իւր առած 8 ռուբլին եռապատիկ քանակութեամբ, այն է՝ 24 ռ. յօգուտ Մայր Աթոռին։

—

Խաալիոյ Հպատակ Անատոլի Բարժելու կինը՝ տիկին Եղիսաբեթ Յովհաննեանց Բարժեցի խնդրել էր Հանգուցեալ Կաթուղիկոսից, որ իւր պսակը լուծուած համարուի, որովհետև իւր մարդը Անատոլին ինն տարի էր, որ թողնելով իրան և իրան տղայոցը, տարակայել էր. և ինչպէս ինքն տեղեկացել էր՝ Անատոլին կրկին անգամ ամուսնացած էր Տաճկաստանում։ Սինոդը տեղեկութիւն պահանջելով Կ. Պոլսի Հայոց Ամենապատիւ Պատրիարքից հաստատ իմացաւ, որ աղերսարկու Եղիսաբեթի այր Անատոլին պըսակուել է Կ. Պոլսում Տատեան Մարտիկ պէյի դստեր Երանիկի հետ մի յոյն քահանայի ձեռքով և այդ ամուսնութիւնից եղել են երկու որդի՝ մէկը այժմ կենդանի է, իսկ միւսը մեռած։ Ուստի տիկին Եղիսաբեթի խնդիրը իւր մարդից անջատուելու մասին մերժեց, որովհետև մարդը կենդանի էր, իսկ Անատոլիի վերջին ամուսնութիւնը անվաւեր համարելով, խնդրեց Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքից՝ թէ որ հնար է, ջոկել տալ նրան իւր անկարգ կենակցից՝ Երանիկից և ուղարկել՝ Անատոլուն իւր օրինաւոր կին Եղիսաբեթի մօտ միասին բնակելու համար, և պսակադիր յոյն քահանային պատժել իւր հոգևոր իշխանութեան ձեռքով։

—

Ապրիլի 27. Մակար վարդապետի հիւանդութեան պատճառով իւր խնդրանաց համեմատ Սինոդը հրաժարած համարեց նրան և նորա փոխանակ Կաթուղիկոսի ընտրութեան պատգամաւոր կարգեց Միաբանութեան կողմից Ղևոնդ վարդապետ Յովակիմեանին։

—

Ապրիլի 27. Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան ս. Էջմիածին ժամանելով՝ Սինոդը նորին բարեշնորհութիւնը հրաւիրեց Ատեան՝ և թոյլ տուեց վարել Սինոդի անդամի պաշտօն։

—

Ապրելի 29· Ղարաբաղու Հայոց Կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ Սինոդը պատուիրեց Թեմի Առաջնորդ Կարապետ Եպիսկոպոսին, որ թեմական դպրոցում ուսումն աւարտող Կարապետ Տէր Գրիգորեանցին քահանայ ձեռնադրէ Ղուզէյ-ձարտար գիւղի ժողովուրդը հովուելու։

—

Ապրելի 29· Սինոդի Անդամ Գեր· Գրիգորիս եպիսկոպոսը, որ ծառայութեան գործով բացակայ էր համարւում վերադարձաւ, Սինոդը հրաւիրեց նորին Գերապատուութիւնը վարել իւր պաշտօնը ըստ առաջնոյն։

—

Մայիսի 1· Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Թեմի Կառավարիչ Գեր· Գրիգոր եպիսկոպոս Ազատիրեանցը ապր· 15-ից համար 80, զեկուցանում է, իրաւաբան պ· Ստեփաննոս Մամիկոնեանցի ընտրութեան մասին իբրև աշխարհական պատգամաւոր այն Թեմի, և իւր տկարութեան պատճառով համազգային հայրապետական ընտրութեան չմասնակցելու համար։ Նշանակում է իւր կողմից ներկայացուցիչ Եփրեմ Աբեղայ Սուքիասեանցին։

—

Մայիսի 1· Ատրպատականի Հայոց Առաջնորդի ապր· 15-ից համար 91 յայտարարութեան հիման վերայ Սինոդը հրամայում է Հաւիճոյ վանքի վանահայր Եղիշէ վարդապետին ճանաչել նոյն թեմի եկեղեցական պատգամաւոր ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ընտրութեան գործում մասնակցելու համար։

—

Ի յ²/₅ Մայիսի 1892 ամի· ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔԱՆԱԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի լուսն զզեկուցումն· լուրջ դիտողութեամբ ի զնին առեալ Սինոդիս զթուղթս նախ՝ Գերապատիւ Առաջնորդաց Վիճակացն Հայոց Ռուսաստանի, երկրորդ՝ Ատրպատականի, Պարսկաստանի և Հնդկաստանի, եր-

բորդ՝ Ամենապատիւ Պատրիարքացն Հայոց Կ. Պոլսոյ և Ս. Ամոռոյն Երուսաղէմի, չորրորդ՝ Գեր. Առաջնորդաց, Պատրիարքական փոխանորդաց, Կրօնական և Ազգային Ժողովոց Հայոց Տաճկաստանի, եգիպտ, զի եկեղեցական ներկայացուցիչք և օրինաւոր կարգաւ ընտրեալ աշխարհական պատգամաւորք՝ որք ունին իրաւունս մասնակցելոյ Հայրապետական ընտրութեան՝ են սոքին. ի վիճակաց Հայոց Բեսարաբիոյ բարեշ. Եփրեմ Աբեղայ Սուքիասեանց՝ ի տեղի կառավարչի թեմին Գեր. Գրիգոր եպիսկոպոսի Ադափիրեան, մեծ. Ստեփան Մամիկոնեան. Երևանայ՝ փոխանորդ թեմական գեր. Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեան, մեծ. Ռուբէն Հասան-Ջալալեանց. Տփխեաց՝ Առաջնորդ գեր. Մամբրէ եպիսկոպոս Սանասարեանց, մեծ. Գրիգոր Արծրունի. Ատրպատականի՝ Առաջնորդ գեր. Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանց, մեծ. Յովհաննէս Սարգսեանց. Ղարաբաղու Առաջնորդ գեր. Կարապետ եպիսկոպոս Այվազեան, մեծ. Ներսէս Աթաբէկեան. Շամախւոյ Առաջնորդ գեր. Մեսրոպ Արք-եպիսկոպոս Սմբատեանց, մեծ. Աղեքսանդր Լալայեանց. Ատրպատականի՝ բ. Եղիշէ վարդապետ Ամատունի ի տեղի Առաջնորդի՝ գեր. Ստեփաննոս եպիսկոպոսի Մխիթարեանց, անձնափոխանորդ պատգամաւորի մեծ. Աղեքսանդր Մելիք-Ազարեանց. Պարսկաստանի և Հնդկաստանի՝ բ. Խաչատուր վարդապետ Կարապետեան ի տեղի Առաջնորդի՝ գեր. Եսայի եպիսկոպոս Աստուածատրեանց, մեծ. Համբարձում Առաքելեանց. ի Պատրիարքական վիճակէն Կ. Պոլսոյ գեր. Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան, ի տեղի Պատրիարքի՝ Ամենապատիւ Խորէն Արք-եպիսկոպոսի Աշրգեան, Տիգրան Էֆէնդի Կիւմիւշկերտան. Երուսաղէմի՝ գեր. Սահակ եպիսկոպոս Ղապայեան ի դիմաց Ամենապատիւ Պատրիարքի՝ Յարութիւն Արք-եպիսկոպոսի Վեհապետեան, Յարութիւն Էֆ. Թորոսեան. Թագիր-դաղի՝ Առաջնորդ գեր. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան, Յակոբ Էֆ. Նէվրուզեան. Ադրիանապոլսոյ՝ առաջնորդ գեր. Մեսրոպ Արք-եպիսկոպոս Սուքիասեան, Մաքսուտ Էֆ. Սանդալճեան. Մոլտաւիոյ հոգևոր հովիւ բ. Գէորգ Ծ. վարդապետ Երիցեան. Համբարձում Էֆ. Յարութիւնեան. Շապին Գարահիսարի՝ գեր. Մաղաքիա եպիս-

կոպոս Օրմանեան, ի տեղի Պատրիարքական փոխանորդի՝ բ. Խորէն ծ. վարդապետի Կիւրոյեան. Պայազիտի՝ Յովհաննէս քահանայ Տէր-Յովնանեան, ի դիմաց Առաջնորդի գեր. Յովհաննէս եպիսկոպոսի, Սարգիս Ենգիբարեան. Տրապիզոնի առաջնորդական տեղապահ բար. Արիստակէս վարդապետ Տէր-Սարգսեան, Յարութիւն էֆ. Շահրիկեան. Ամասիոյ և Մարզուանու՝ պատրիարքական փոխանորդ բար. Եղիշէ ծ. վարդապետ Այվազեան, Կարապետ էֆ. Փափազեան. Եւդոկիոյ՝ պատրիարքական փոխանորդ բար. Եղիշէ ծ. վարդապետ Այվազեան, Յովհաննէս էֆ. Գալփաճեան. Սեբաստիոյ՝ բար. Նահապետ աբեղայ ի տեղի Առաջնորդի գեր. Պետրոս եպիսկոպոսի, Յովհաննէս էֆ. Կիւլպէնկեան. Կարնի՝ Պատրիարքական փոխանորդ գեր. Ղեւոնդ եպիսկոպոս Շիշմանեան, Կարապետ էֆ. Տէր-Ազարեան. Վանայ՝ Պատրիարքական փոխանորդ բար. Յովսէփ ծ. վարդապետ Այվազեան, Մանուէլ էֆ. Անանեան. Մշոյ՝ բար. Ներսէս ծ. վարդապետ Խարախանեան, Կարապետ էֆ. Տէր-Ազարեան. Բաբերդի՝ Կարապետ էֆ. Մարգարեան. Երզնկայի՝ Առաջնորդ բար. Յովհաննէս ծ. վարդապետ Արշարունի. Համբարձում էֆ. Լէփեան. Կամախու՝ Ամենապատիւ Տ. Տեղակալ Բարձր Սրբազան Երեմիա եպիսկոպոս ի դիմաց բար. Վարդան ծ. վարդապետի. Բալուայ՝ Մկրտիչ էֆ. Խաչմաթեան. Արապկերու՝ Տիգրան էֆ. Կիւմիւշկերտան. Ակնայ՝ Յարութիւն քահանայ Յակոբեան, Յովսէփ էֆ. Ճանիկեան. Արղնի՝ փոխ-վանահայր բար. Յովհաննէս ծ. վարդապետ Փափազեան, Պետրոս էֆ. Ալէքսանեան. Ճանիկու՝ Տ. Բարդուղիմէոս աւագ քահանայ ի տեղի առաջնորդական տեղապահի՝ բար. Արիստակէս վարդապետի Տէր-Սարգսեան Խաչատուր էֆ. Արսլանեան. Գաղատիոյ Տ. Խորէն աւագ քահանայ Վարդերեան ի տեղի Պատրիարքական փոխանորդի. Բասենի՝ գեր. Ղեւոնդ եպիսկոպոս Շիշմանեան ի տեղի փոխ-առաջնորդի բար. Տիմոթէոս վարդապետի Արամեան. Զնքուշի վանահայր բար. Մինաս ծ. վարդապետ, Յովհաննէս էֆ. Տէկիրմէնճեան. Կեսարիոյ՝ առաջնորդ բար. Տրդատ ծ. վարդապետ Պալեան, Համբարձում էֆ. Մոստիչեան. Տիգրանակերտի Մկրտիչ էֆ. Եկանեան. Սղերտի Քրիստան՝ պատրիար-

քական փոխանորդ բ. Խորէն ծ. վարդապետ Շահնազարեան. Եդեսիոյ՝ գեր. Խորէն արք-եպիսկոպոս Մխիթարեան, Յարութիւն էֆ. Արծրունի. Զմիւռնիոյ՝ առաջնորդ բար. Ներսէս ծ. վարդապետ Ալանեան, Գարեգին էֆ. Փափազեան. Եգիպտոսի և Կրիտայ՝ առաջնորդ բար. Գէորգ ծ. վարդապետ Իսթիւճեան. Պանաբրմայի առաջնորդ գեր. Տիմոթէոս եպիսկոպոս Սափրիջեան. Կուտինայի առաջնորդ բար. Պօղոս ծ. վարդապետ Խօլտամեան, Անտոն էֆ. Ազասեան. Նիկոմիդիոյ առաջնորդ գեր. Սաեփաննոս եպիսկոպոս Յովակիմեան, Դասպար էֆ. Դասպարեան. Զմիկածագի Կարապետ էֆ. Մուրատեան. Պրուսայի բար. Պօղոս ծ. վարդապետ Խօլդամեան ի տեղի առաջնորդի՝ գեր. Բարդուղիմէոս արքեպիսկոպոսի և պ. Աբգար Յովհաննիսեան։ Հրամայեցին՝ Զմերոյգրեալ եկեղեցական և աշխարհական անձինս ճանաչել օրինաւոր պատգամաւորս ունողս իրաւանց մասնակցելոյ ընտրութեան Հայրապետի Ամենայն Հայոց, և զքաղուածն յօրագրոյս հանդերձ ցուցակաւ եկելոցն ի նոցունց մատուցանել Նորին Ամենապատուութեան Տէր Տեղակալի Ատենապետի Սինոդիս ի տնօրէնութիւն։

—

Մայիսի 8. Կովկասի քաղաքական մասի Կառավարչապետի առաջադրութեան համաձայն անցեալ ապրելի 17-ին թ. 3493 Ռուսաստանի, Տաճկաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց վիճակների հոգևորական և աշխարհական պատգամաւորների Համազգային ժողովը գումարելով ամսոյս չորրորդ և հինգերորդ օրերում Ս. Էջմիածնի Մայր տաճարում Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութեան համար, սահմանուած կարգով Բարձրագոյն Իշխանութեան ներկայացուցիչ գաղտնի խորհրդական պ. Պրիբիլի ներկայութեամբ՝ ընտրեց չորս բարձրաստիճան ընտրուած եկեղեցականներից Ամենայն Հայոց Հայրապետութեան թիկնածու Ամենապատիւ Տ. Մկրտիչ Արք-եպիսկոպոս Խրիմեանին միաձայն, իսկ Գերապատիւ Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեանին 50 ձայնով ընդդէմ 22 ձայների և այս մասին կազմելով օրագիր բոլոր պատգամաւորների ստորագրու-

թեամբ՝ յանձնեց Սինոդիս տնօրինելու։ Նոյն Համազգային ժողովը ընտրել է՝ ընտրութեանց ցուցակների հետ իսկական օրագիրը Պարոն Կառավարչապետին ներկայացնելու մասնաժողովոյ անդամներ—Շամախու թեմի Գեր. Տ. Մեսրոպը Արք-Եպիսկոպոս Սմբատեանցին և պարոնայք Ներսէս Ամբաբէկեանցին և Աբգար Յովհաննիսեանցին, բայց պ. Ներսէս Ամբաբէկեանցը գրաւոր յայտնելով Ամենապատիւ Տ. Տեղակալին, որ կալուածական գործով մնալու է Ներսէսապատում մինչև ամսոյս 14-ը. Ուստի Հրամայէցէն. Հայաստանեայց եկեղեցու Կառավարութեան համար Բարձրագոյն հաստատուած 18-րդ յօդուածի զօրութեամբ, ընտրողական ժողովից որոշուած երեք պատգամաւորների ձեռքով ուղարկել, այն է՝ Շամախու Հայոց Առաջնորդ Գեր. Մեսրոպը Արք-եպիսկոպոս Սմբատեանցի, Պրուսայի պատգամաւոր պ. Աբգար Յովհաննիսեանցի և Ներսէս Ամբաբէկեանցի փոխարէն Պարսկաստանի և Հնդկաստանի պատգամաւոր պ. Համբարձում Առաքելեանցի ձեռքով ընտրութեանց ցուցակների հետ նոյն ժողովի իսկական Օրագիրը Կովկասի քաղաքական մասի Պ. Կառավարչապետին, թողնելով նոցա պատճէնները Սինոդի գործերում՝ և խնդրել Նորին Գերազանցութեան կողմից պատշաճական տնօրէնութիւն ամենայն Հայոց Պատրիարք Կաթուղիկոսի հաստատութեան համար։

—

Մայիսի 16. Վանական կառավարութեան մայիսի 13-ից թ. 57 յայտարարութեան համաձայն հրամայւում է տալ Մայր Ամոռի և Ճեմարանի ծախուց համար տասն հազար ռուբլի, որը անցեալ յունուար, փետրուար, մարտ և ապրել ամիսներում ստացած 32000 ռուբլի գումարի հետ անում ընդ ամենը քառասուն և երկու հազար ռուբլի։

—

Մայիսի 16. Վանական կառավարութիւնը խնդրում է Սինոդից մայիսի 13-ից թ. 58 յայտարարութեամբ Միաբանների նոր սենեակների շինութեանց համար 3000 ռ., որ անցեալ ապրելի ընթացքում ստացած 2000 ռուբլու հետ կանէ ընդ ամենը 5000 ռուբլի։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ ՏԷՐ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՉԻՆ ԵՐԵՒԱՆՆԱՑ ՎԻՃԱԿԻՆ.

—

Տեսչի Եկեղ.-Ժխական Ուսումնարանաց Վիճակին Հայոց Երևանայ Բարեկ. Մեսրովբ քահանայ Մելեանց։

Փոխանորդ Վիճակին Հայոց Աղէքսանդրապոլու բարեշնորհ Գարեգին վարդապետն և հոգաբարձուք երկդասեան Արղութեան օրիորդական դպրոցի Հայոց տեղւոյն և որմնադիր վարպետք... ի 19 և 20 ամսոյս թ. 137 և 20 բողոք բառնան առ մեզ և առ Սինոդն զաւագ ուսուցչէ նոյն դպրոցի զԿոստանդինէ Տէր-Զաքարեանց և զվարժուհւոյ տիկին Մարգարիտէ Վիրանեանց, որք յանդգնեալ են անարգանս հասուցանել Նորին Բարեշնորհութեան ի դպրոցի անդ՝ ասելով առաջնոյն. «չեմ ճանաչում Ձեզ, դուրս գնացէք և այլն» որում ապա հետևեալ է երկրորդն։

Ի նկատ առեալ զայս անպատշաճ վարմունս աւագ ուսուցիչ Կոստանդինի Տէր-Զաքարեանց և ուսուցչուհի տիկին Մարգարտի Վիրանեանց առաջադրեմք բարեկրօնութեան Ձերում արձակել զնոսա իսպառ ի պաշտօնէ ուսուցչութեան ի խրատ և ի զգուշութիւն պաշտօնակցաց նոցին ամենեցուն. իսկ առ ի չընդունելոյ զնոսա յայլ դպրոցս Հայոց հրատարակեսցի ի գիտութիւն համայն հոգաբարձուաց և տեսչաց տպագրութեամբ ի պաշտօնական բաժնի «Արարատ» ամսագրոյ։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА.
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ